# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 8 մայիսի 2000 թ.:**

Մայիսի 9-ի Հաղթանակի օրվա առիթով Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևյալ ուղերձն է հղել.

Սիրելի հայորդիք.

Մայիսի 9-ը կրկնակի տոն է մեր ժողովրդի զավակաց համար՝ Հաղթանակի նվիրական օր, որ իր խորհրդով միավորում է ֆաշիզմի դեմ Երկրորդ համաշխարհային պատերազմում ձեռք բերված պանծալի հաղթության և Արցախյան պատերազմում Շուշիի ազատագրության սուրբ հիշատակները:

55 տարիներ են անցել այն օրից, երբ լռեցին համաշխարհային աղետաբեր պատերազմի որոտները և բռնության, անօրինության ու չարիքի դեմ ելած բազում ժողովուրդների թվում փոքրաթիվ հայ ժողովրդի քաջարի մարտիկները ևս իրենց «սուրը փառքով դրեցին պատյան»: Հայրենյաց նվիրյալ, ազատության ու արդարության պաշտպան նրանց ոգին՝ որպես նախնյաց սրբազան ժառանգություն, անթեղվեց իրենց որդիների ու թոռների հոգիներում և բոցավառվեց Արցախի ազատագրական պատերազմում՝ Մայիսյան ևս մեկ հաղթություն պարգևելով մեր ժողովրդին:

Մայիսի 9-ի հաղթապսակ օրվա առիթով, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, շնորհավորում ենք և Հայրապետական Մեր օրհնությունը հղում համայն մեր ժողովրդի զավակաց, Հայրենական Մեծ պատերազմի բոլոր մասնակիցներին և Արցախյան պատերազմի ազատամարտիկներին:

Հավերժ փա՜ռք մահին մահով հաղթանակած և կյանքը փառքով պսակած հերոսներին:

Թող ոչինչ և երբեք չխամրեցնի հայրենյաց պաշտպանի անմնացորդ Ձեր ծառայության բարձրանուն փառքը:

«Խաղաղութիւն և Սէր Տեառն մերոյ ընդ մեզ ամենեսեան. ամէն»:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ